

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀ-ԲՆ-ԴԾ-18/03**

ք. Երևան

« 12 » « փետրվարի » 2018թ.

**Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը**, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար **Հ.Հովհաննիսյանի** (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն **Վ.Գուլանյանի** (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1717-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական միջոցառումների» ծրագրի՝ բաժին 05, խումբ 04, դաս 01, ծրագիր 03 (բնության հատուկ պահպանվող տարածքներում, ազգային պարկերում, պետական արգելոցներում պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական միջոցառումների իրականացում, այսուհետ՝ Ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

**1. Պայմանագրի առարկան**

- 1.1. Սույն պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Որոշմամբ նախատեսված՝ մինչև **252 666 400 (երկու հարյուր հիսուներկու միլիոն վեց հարյուր վաթսուներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամ** գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:
- 1.2. Ծրագրով նախատեսված Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի Հավելված N\*1-ում:

**2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները**

- 2.1. **Պետական մարմինն իրավունք ունի՝**
    - 2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.
    - 2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.
    - 2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝
  - ա) Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,
  - բ) Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),
  - գ) իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.
    - 2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:
- 2.2. **Կազմակերպությունն իրավունք ունի՝**
  - 2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.
  - 2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:
- 2.3. **Պետական մարմինը պարտավոր է՝**
  - 2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.
  - 2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.
  - 2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.
  - 2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 5 օրացուցային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը:
- 2.4. **Կազմակերպությունը պարտավոր է՝**
  - 2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվառումը հաշվապահական հաշվառման վարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան.



- 2.4.2. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.
- 2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.
- 2.4.4. Պետական մարմնին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին աճողական հաշվետվություններ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 5-ը, իսկ 4-րդ եռամսյակինը՝ մինչև դեկտեմբերի 15-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ 20-օրյա ժամկետում ամփոփ հաշվետվություն.
- 2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.
- 2.4.6. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.
- 2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան.
- 2.4.8. սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում գոյացած խնայողություններն ուղղել իր կանոնադրական գործառնությունների իրականացմանը՝ նախապես համաձայնեցնելով Պետական մարմնի հետ:

### 3. Մոնիթորինգը

- 3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
- 3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:
- 3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:
- 3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
- 3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

### 4. Վճարման կարգը և ժամկետները

- 4.1. Սույն պայմանագրի Հավելված №2-ով հաստատված, տվյալ եռամսյակին բաժին ընկնող գումարը յուրաքանչյուր ամսվա առաջին 5 աշխատանքային օրվա ընթացքում, հավասար մասնաբաժիններով Պետական մարմինը փոխանցում է Կազմակերպության բանկային հաշվին՝ որպես տվյալ եռամսյակի կանխավճար:
- 4.2. Եթե Կազմակերպությունը տվյալ եռամսյակի համար նախատեսված միջոցառումները
  - ա) իրականացրել է ամբողջությամբ և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ սույն պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով.
  - բ) ամբողջությամբ չի իրականացրել, ապա կիրառվում է սույն պայմանագրի 2.1.2 և (կամ) 2.4.6 կետերով սահմանված պայմանները և իրականացված միջոցառումների արժեքի չափով Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, իսկ հաջորդ կանխավճարը վճարվում է չիրականացված միջոցառման չափով պակաս և սույն պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով.
  - գ) իրականացրել է նախատեսվածից ավելի և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ սույն պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով, իսկ ավել իրականացված միջոցառման չափով վճարումն իրականացվում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 20-ը, սակայն ոչ ավելի սույն պայմանագրի 1.1 կետով սահմանված գումարից:

### 5. Կողմերի պատասխանատվությունը

- 5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է ստացված ֆինանսական աջակցության գումարները չիրականացված միջոցառման չափով վերադարձնել Պետական մարմնին և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

### 6. Պայմանագրի գործողության ժամկետը

- 6.1. Սույն պայմանագրի պայմանները տարածվում են 2018 թվականի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:



## 7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

- 7.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու սույն պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. Եզրափակիչ դրույթներ

- 8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը (Հավելված N°2) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:
- 8.2. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:
- 8.3. Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում գոյացած խնայողությունները Կազմակերպությունը ուղղում է իր կանոնադրական գործառույթների իրականացմանը:
- 8.4. Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ: Սույն պայմանագրի Հավելվածներ N°N°1-ը և 2-ը համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:
- 8.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

### ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

«ՀՀ բնապահպանության նախարարություն»  
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք  
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն  
ՀՀ 900011007789  
ՀՎՀՀ 02507198

«ՀՀ բնապահպանության նախարարության  
աշխատակազմի ղեկավար  
Վ. Գրիգորյան»




### ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ  
ք.Սևան, Նաիրյան 178  
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ  
ՀՀ 11500907700577  
ՀՎՀՀ 08602899

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի  
տնօրեն

Վ. Գրիգորյան




**ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**  
 ՀՀ բնապահպանության նախարարության  
 լաբորատորիայի ղեկավար  
**Հովհաննիսյան**



(Ստորագրություն)

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**  
 «Սևան» ազգային պարկ» ՊՈՒԼՎ-ի  
 տնօրեն  
**Վ. Գուլանյան**



(ստորագրություն)  
 Կ.Տ.


**ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

| NN<br>Ը/Կ       | Իրականացվելիք միջոցառման   |  |  |  |                |                          |
|-----------------|--|--|--|--|----------------|--------------------------|
|                 | անվանումը  | համառոտ բովանդակությունը   | կատարման ենթակա գործառույթների նկարագիրը   | ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները                     | վերջնա-ժամկետը | պահանջվող գումարը (դրամ) |
| 1               | Պարկի տարածքում գիտական հետազոտություններ, անտառտնկարկների ուսումնասիրություն և խնամք, պարկի բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնական տեսակների գենֆոնդի, բնության ժառանգության, պահպանություն, պաշտպանություն ազգային պարկի ամբողջ տարածքում | Ազգային պարկի տարածքում (147343 հա) և պահպանման գոտում՝<br>ա/ աշխատանքային պլաններով նախատեսված գիտական հետազոտությունների իրականացում,<br>բ/ անտառագիտական և անտառտնտեսական միջոցառումներ իրականացում<br>գ/ պահաբաժիններում գարնանային և աշնանային հերթական և վերստուգիչ ստուգումներ<br>դ/ պահպանության ընդհանուր միջոցառումների իրականացում,<br>ե/ հարող բնակավայրերի բնակչության շրջաններում էկոլոգիական իրազեկություն,<br>զ/ էկոդաստիարակություն | Գիտության և մոնիթորինգի բաժնի աշխատակիցներ կողմից աշխատանքային պլաններով նախատեսված գիտական հետազոտությունների իրականացում:<br>Մասնաճյուղերի կողմից անտառագիտական և անտառտնտեսական միջոցառումներ իրականացում, պահաբաժիններում գարնանային և աշնանային հերթական և վերստուգիչ ստուգումների իրականացում:<br>Պահպանության ծառայություններ աշխատակիցների կողմից պարկի տարածքի արգելոցների և արգելավայրերի տարածքներում ստուգումների և շուրջօրյա հերթապահությունների միջոցով, բացատրական և քարոզական միջոցառումների կազմակերպում և իրականացում, արդյունքների ամփոփում ու վերլուծություն | Պատշաճ պահպանություն, հանրության իրազեկության պատշաճ մակարդակի ապահովում | 31.12.2018թ.   | 252 666 400              |
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b> |  |  |  |  |                | <b>252 666 400</b>       |

**ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**  
 ՀՀ բնապահպանության նախարարության  
 աշխատակազմի ղեկավար  
**Հ.Հովհաննիսյան**  
 (ստորագրություն)  
 Կ.Տ.



**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**  
 «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի  
 տնօրեն  
**Վ.Գուլանյան**  
 (ստորագրություն)  
 Կ.Տ.



**ՀՀ Գյուղատնտեսության կողմից հաստատված ծրագիր**

| Ծրագրային դասիչը    | Անվանումը<br>«Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական միջոցառումներ  | Ոչ ֆինանսական ցուցանիշներ |            |        |        | Ֆինանսական ցուցանիշներ |            |        |      |
|---------------------|---|---------------------------|------------|--------|--------|------------------------|------------|--------|------|
|                     |   | Ի նոսմայակ                | Լ կիսամյակ | 9 ամիս | Տարի   | Ի նոսմայակ             | Լ կիսամյակ | 9 ամիս | Տարի |
| 1155                | ԱՄ 04<br>Նկարագրություն<br>Քնության հատուկ պահպանվող տարածքներում, ազգային պարկերում, պետական արգելոցներում պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական միջոցառումների իրականացում |                           |            |        |        |                        |            |        |      |
| <b>Չափորոշիչներ</b> |   |                           |            |        |        |                        |            |        |      |
| Քանակական           | Մարդու գործունեության հետևանքով ազգային պարկի բնական էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող գործընթացների կանխարգելման ապահովում, պարկի տառածքը, հա  | 147343                    | 147343     | 147343 | 147343 |                        |            |        |      |
|                     | Սևան լճի ձկնատեսակների վիճակի ուսումնասիրում և դրանց հիման վրա հաշվետվությունների կազմում, եռամսյակային հաշվետվությունների թիվը   | 1                         | 2          | 3      | 4      |                        |            |        |      |
|                     | Պարկի տարածքի բնական էկոհամակարգերի կենսաբազմազանության մոնիտորինգի անցկացում և յուրաքանչյուր եռամսյակի վերջում հաշվետվության ներկայացում, եռամսյակային հաշվետվությունների թիվը                     | 1                         | 2          | 3      | 4      |                        |            |        |      |
|                     | Ազգային պարկի տարածքում էկոհամակարգերի լանդշաֆտային բազմազանության և կենսաբազմազանության մշտական դիտարկումներ, բնության ժառանգության գիտական ուսումնասիրություն, հաշվետվությունների թիվը            |                           |            | 4      | 6      |                        |            |        |      |

|  |   |    |    |    |                                     |         |          |          |          |
|--|---|----|----|----|-------------------------------------|---------|----------|----------|----------|
|  | Թանգարանում և ուսումնական հաստատություններում դասերի կազմակերպում, սեմինար-դասերի քանակը, հաստ  | 3  | 6  | 9  | 12                                  |         |          |          |          |
|  | Հողատարածքների և գույքի նպատակային օգտագործման հետ կապված պայմանագրային պարտականությունների կատարման վրա բոլոր վարձակալների նկատմամբ հսկողության իրականացում; ստուգայցների քանակը, հաստ         | 26 | 26 | 26 | 26                                  |         |          |          |          |
|  | Հսկողության իրականացում ազգային պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության պահպանության նկատմամբ; ամենօրյա ստուգայցների և շրջագայությունների քանակը, հաստ | 26 | 26 | 26 | 26                                  |         |          |          |          |
| Որակական   | «Սևան» ազգային պարկի տարածքում գտնվող հանրային յուրափերի սպասարկում և պահպանում, հանրային յուրափերի քանակը, հաստ<br>Մշակված չէ  |    | 3  | 3  | 3                                   |         |          |          |          |
| Ժամկետայնության  | Թանգարանում և ուսումնական հաստատություններում դասերի կազմակերպման և սեմինար-դասերի անցկացման ժամանակահատվածը  |    |    |    | Փետրվար-մայիս և սեպտեմբեր-հոկտեմբեր |         |          |          |          |
|  | Հողատարածքների և գույքի նպատակային օգտագործման հետ կապված պայմանագրային պարտականությունների կատարման վրա բոլոր վարձակալների նկատմամբ հսկողության իրականացման պարբերականություն                  |    |    |    | Մնացած 2-ից 4 անգամ                 |         |          |          |          |
| Իրականացվող միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)   |   | X  | X  | X  | X                                   | 45480.0 | 103593.3 | 171813.2 | 252666.4 |
| <b>Շրագիտը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է բաղադրականության միջոցառումը</b><br>1155 Բնական պաշարների կառավարման և պահպանման, բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման միջոցառումներ<br>Վերջնական արդյունքի նկարագրությունը<br>Բույսերի և կենդանիների պահպանություն և վերարտադրության աճի ապահովում<br>Միջոցառումն իրականացնողի անվանումը<br>«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ |   |    |    |    |                                     |         |          |          |          |